

## **Գաղտնիության քաղաքականություն**

Հետևյալ Գաղտնիության Քաղաքականությունը սահմանում է, թե ինչ կերպով է SiteLink-ը հավաքում և օգտագործում այն տեղեկությունը, որը ստանում է sitelink.am կայքի (այսուհետ՝ Կայք) օգտատերերից :

Որևէ ձևաչափով մուտքագրելով և ուղարկելով անձնական տվյալները Կայքում, Օգտատերը որոշում է ընդունում տրամադրել իր անձնական տվյալները և տալիս է իր համաձայնությունը դրանց մշակման համար իր սեփական կամքով և շահով, ընդ որում, Օգտատիրոջ նման համաձայնությունը կոնկրետ է և գիտակցված:

Օգտատիրոջ անձնական տվյալների նկատմամբ պահպանվում է գաղտնիություն, դրանք ոչ մի դեպքում չեն տարածվում և չեն տրամադրվում երրորդ անձանց առանց Օգտատիրոջ համաձայնության, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Օգտատերը համաձայնվում է, որ SiteLink-ի Ադմինիստրացիան իրավունք ունի օգտագործելու Օգտատիրոջ անձնական տվյալները էլեկտրոնային տեղեկատվական կամ գովազդային նյութերի ուղարկման համար:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը Օգտատիրոջ կողմից յուրաքանչյուր պահին կարող է հետ կանչվել՝ SiteLink-ին գրավոր դիմում ուղարկելու միջոցով: Օգտատիրոջից նման խնդրանք ստանալու դեպքում, SiteLink-ը հեռացնում է Օգտատիրոջ անձնական տվյալները և այլևս իրավունք չունի հետագայում դրանք օգտագործելու:

Օգտագործելով Կայքը, Դուք տալիս եք Ձեր կոնկրետ և գիտակցված համաձայնությունը այս Քաղաքականության հետ: Եթե Դուք համաձայն չեք այս Քաղաքականության հետ, ապա խնդրում ենք չօգտվել Կայքից: